<ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ> ԲԲԸ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ Հ.1Խ-24

ք. Երևան, Արշակունյանց պողոտա 12 10.01.2024թ., ժամը 12:00

Նիստին ներկա էին՝ խորհրդի 9/ինը/ անդամները:

Խորհրդի անդամներ՝ -

Հ. Ռ. Շիրինյան, Գրիգորյան Ս.Է., Գամբուրյան Ս.Կ., Երոյան Տ.Ս., Մաթևոսյան Է.Հ., Հակոբյան Ն.Խ., Եսայան Հ.Լ, Մինասյան Մ.Հ. և Ղազարյան Գ.Գ.:

Հրավիրված անձեր. կադրերի կառավարման գծով փոխտնօրեն՝ Արմինե Գևորգի Ժամհարյանը և անվտանգության գծով ղեկավար՝ Արմեն Ալբերտի Մուրադյանը:

Նիստի օրակարգը՝

- Ընկերության ոսկյա զարդերի ֆիրմային խանութների գործունեության դադարեցման և վարձակալության պայմանագրերի լուծարման վերաբերյալ:
- Այլ հարցեր

Ժողովը բացեց խորհրդի նախագահ Հրանտ Ռուբենի Շիրինյանը և ձայնը տվեց խորհրդի անդամ, Ընկերության իրավաբան Էդուարդ Հայկազի Մաթևոսյանին:

Նա ասաց, որ Ընկերությունը 2023թ. դեկտեմբերի 31 դրությամբ ունի երեք ֆիրմային խանութներ: Գլխավոր խանութը գտնվում է Ընկերության տարածքում, որի անվանումը՝ Խանութ սրահ /հասցե՝ Արշակունյանց 12/ և Ընկերությունը վարձակալում է երկու տարածք ֆիրմային խանութների համար:

Առաջինը <Երևան – Մոլի> 2-րդ հարկի տարածքում տաղավար 80 <Գնոմոն ֆիրմային խանութ Երևան - Մոլ> անվամբ /հասցե՝ Արշակունյանց 34/3/ և երկրորդը Հյուսիսային պողոտայում խանութ <Էմիլ Գրիգորյան ֆիրմային խանութ> անվամբ /հասցե՝ Հյուսիսային պողոտա 5/:

Խորհրդի անդամ Է. Հ. Մաթևոսյանը տեղեկացրեց Ընկերության խորհրդին, որ անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի ժամկետները ավարտվում են սույն թվականի փետրվարին:

Ելույթ ունեցավ խորհրդի անդամ Գամբուրյան Ս. Կ.:

Նա ասաց, Հյուսիսային պողոտայում գտնվող <Էմիլ Գրիգորյան ֆիրմային խանութ> տարածքի <ՍՈԼԱՐ Մ> ՍՊԸ-ի վարձատուն ցանկություն չունի երկարաձգել գործող պայմանագիրը: Այդ խանութ սրահի տնտեսական ցուցանիշները բավարարում են Ընկերությանը:

Առաջարկեց ուսումնասիրել Երևան քաղաքի փոքր կենտրոնի մարդաշատ վայրերը և գտնել համապատասխան տարածք, խանութ տաղավարը տեղափոխելու համար:

Ինչ վերաբերվում է <Երևան – Մոլի> տարածքում գտնվող խանութին, ապա վարձակալության պայմանագիրը կնքվել է <Շին Տավր> ՍՊԸ-ի միջև և ավարտվում է 2024թ. փետրվարի 15-ին և առաջարկեց պայմանագիրը թարմացնելու համար քննարկել տնտեսական ցուցանիշները: Տարեկան կտրվածքով վաճառքի ընդհանուր ծավալը 2022թ. կազմել է 101,716,569.00 դրամ, առանց ԱԱՀ-ի 84,763,808.00 դրամ; 2023թ. ընդհանուր ծավալը 90,200,389.00 դրամ, առանց ԱԱՀ-ի 75,166,991.00 դրամ:

Ելույթ ունեցավ խորհրդի անդամ Ղազարյան Գ. Գ.:

Նա ասաց, աշխատողների աշխատավարձը կազմում է 2022թ. 12,066,423.00 դրամ, իսկ 2023թ. 11,113,291.00 դրամ: Վարձակալության և կոմունալ ծախսերը 2022թ. 10,800,000.00 դրամ, 2023թ. 11,082,000 դրամ: Ընդհանուր տարեկան եկամուտը 2023թ. կազմել է մոտ 0,75%:

Տնտեսական ցուցանիշները չեն բավարարում Ընկերության պայմաններին:

Խանութ տաղավարում աշխատում են Ընկերության երեք վաճառողուհիներ և երկու անվտանգության աշխատակիցներ:

Ելույթ ունեցավ խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն Տիգրան Սամվելի Երոյանը:

Նա առաջարկեց իրացման գծով տնօրեն՝ Ս. Կ. Գամբուրյան և անվտանգության գծով ղեկավար՝ Ա. Ա. Մուրադյանին տեղավորել թափուր տեղերում այդ աշխատակիցներին: Եթե այդ աշխատակիցները ցանկություն չունենան աշխատելու նույնանման պաշտոններին, ապա կադրերի կառավարման գծով փոխտնօրեն՝ Ա. Գ. Ժամհարյանին տեղավորել այդ աշխատակիցներին համապատասխան աշխատանքի համաձայն ՀՀ գործող օրենսդրությանը:

Քվեարկության դրված հարցն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 9 /ինը/ կողմ:

Որոշեցին՝

1. Հանձնարարել խորհրդի անդան, Ընկերության իրավաբան Էդուարդ Հայկազի Մաթևոսյանին պատրաստել համապատասխան հրաման <Երևան - Մոլի> տարածքում <Գնոմոն ֆիրմային խանութ Երևան - Մոլ> և <ՍՈԼԱՐ Մ> ՍՊԸ-ի տարածքում <Էմիլ Գրիգորյան ֆիրմային խանութ> ոսկյա զարդերի ֆիրմային խանութների անշարժ գույքի վարձակալության պայմանագրերը լուծարելու, հիմնական միջոցների և այլ գույքի գույքագրումը կատարելու, ինչպես նաև հանձման/ընդունման աշխատանքները և դրա հետ բխող այլ հարցերի վերաբերյալ: Կատարման ժամկետները՝ մինչև սույն թվականի հունվարի 12-ը ներառյալ < Գնոմոն ֆիրմային խանութ Երևան - Մոլ> խանութի և փետրվարի 5-ը <Էմիլ Գրիգորյան ֆիրմային խանութ>-ի:
2. Հանձնարարել կադրերի կառավարման գծով փոխտնօրեն՝ Արմինե Գևորգի Ժամհարյանին, մոնիտորինգի ենթարկել <Գնոմոն ֆիրմային խանութ Երևան - Մոլ> խանութում աշխատող աշխատակիցների զբաղվածության հարցը համաձայն ՀՀ գործող օրենսդրությանը: Կատարման ժամկետը՝ մինչև սույն թվականի հունվարի 31-ը:
3. Հանձնարարել խորհրդի անդամ, իրացման գծով տնօրեն Սարգիս Կարապետի Գամբուրյանին գտնել Երևան քաղաքի փոքր կենտրոնի մարդաշատ վայրում համապատասխան տարածք, <Էմիլ Գրիգորյան ֆիրմային խանութ> տաղավարը տեղափոխելու համար: Կատարման ժամկետը՝ մինչև սույն թվականի փետրվարի 19-ը:

4. Սույն որոշման 1-ին կետի կատարման վերջնական ժամկետը՝ <Գնոմոն ֆիրմային խանութ Երևան – Մոլ> ոսկյա իրերի և հուշանվերները թանկարժեք մետաղներից հունվարի 22-ը, այլ հիմնական միջոցների հունվարի 31-ը; <Էմիլ Գրիգորյան ֆիրմային խանութ> ոսկյա իրերի և հուշանվերները թանկարժեք մետաղներից փետրվարի 16-ը, այլ հիմնական միջոցների փետրվարի 21-ը:

Խորհրդի նախագահ	Հ. Ռ. Շիրինյան
Խորհրդի անդամ	Տ.Ս. Երոյան
Խորհրդի անդամ	Հ.Լ. Եսայան
Խորհրդի անդամ	Ս.Է. Գրիգորյան
Խորհրդի անդամ	Ս.Կ. Գամբուրյան
Խորհրդի անդամ	Է.Հ. Մաթևոսյան
Խորհրդի անդամ	Ն.Խ. Հակոբյան
Խորհրդի անդամ	Մ.Հ. Մինասյան
Խորհրդի անդամ	Գ. Գ. Ղազարյան